ՆՈՐ-ԴԱՐ

№ 200 ՏԱՍՆԵՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի 12 Նոյեմբերի 1896 Երեքշաբթի 12 Նոյեմբերի ՏԱՍՆԵՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 200

Տարեկան 10 բուբլի, վեց ամիսը՝ 6 բուբլի, երեք ամիսը՝ 3 բ. 50 կ.
ամիսը՝ 1 բ., հատով 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“.
или Tiflis Rédaction „Nor-Dar“.

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի մօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., տեղամասի համար կրկնապատիկ

ՆՈՐ-ԴԱՐ

ՏԱՍՆԵՒՀՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Քաղաքական-գրականական ամենօրեայ թերթը առաջիկայ **1897**-ին կրկնատարածուի Թիֆլիսում նոյն պիրոյով և ծրագրով ամեն օր, բացի կիրակի և տօներին հետևող օրերից։

Տարեայ բնթացքում «Նոր-Դար» ը լոյս կըտեսնի առնուազն 220—225 համար։

«Նոր-Դար»-ը ստանում է անպահական հեռագրներ և ունի նշանաւոր կիպրոններում յատուկ թղթակիցներ։

«Նոր-Դար»-ի տարեկան գինն է 10 բուբլի, վեց ամսուանը՝ 6 բուբլի։ Թիֆլիսից դուրս՝ ամիսը 1 բ. 50 կ., հատով դուրսը՝ 7 կ., Թիֆլիսում 5 կոպ.։

ՆԻԶՈՊՑԻ և այլ հեռաւոր երկրների բաժանորդները վճարում են տարեկան 40 ֆրանկ։

ԱՄԵՐԻԿԱՑի բաժանորդները վճարում են տարեկան՝ 8 դոլար։ «Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում իւրաքանչիւր ամսի 1-ից միայն։

ԹԻՖԼԻՍՈՒՄ բաժանորդ են գրւում ջրջոյն «ՆՈՐ-ԴԱՐ» ի խմբագրատանը։

Խմբագրատունը գտնւում է Լոռիս-Մելիքեան փողոցում, պատ-հովարատան մօտ։

Օտար քաղաքներից բաժանորդ գրուողները պիտի են խմբագրութեանը այս հասցէով՝ Тифлисъ, въ Редакцію ежедневной газеты „НОРЪ-ДАРЪ“ կամ (Cau ase, rédaction du journal «Nor Dar»։

Եթէ բաժանորդների թիւը սովորականից աւելանայ, «Նոր-Դար»-ը լոյս կըտեսնի շաբաթը վեց անգամ. յամենայն դէպս բոլոր հայ թերթերից «Նոր-Դար»-ն աւելի համարներ կըտայ իւր բաժանորդներին ինչպէս մինչև օրս։

Խմբագրութիւնս իւր ջանքը չի խնայիլ թերթի բովանդակութիւնը ճոխացնելու՝ բնիւր նիւթերով և հետաքրքրական դարձնելու կարևոր տեղեկութիւններով։

Խմբագրութիւնս կունենայ ի միջի այլոց և եւրոպական նշանաւոր կեդրոններից յատուկ թղթակիցներ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼՍԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔԸ.

Կ. Պոլսի նորընտիր պատրիարքը։
Լօրդ Սալսբըրու ճառը։
Մեծ պետութիւնները և Թիւրքիան։
Թրքական գործեր։
Քրոնիկոն.—Նորանոր զոհեր։ Հանգանակութիւն Հայաստանի և Հնդկաստանի սովեալների համար։ Իշխան Ալեքսանդրու նուէրը։ Գէորգ քահ. Գալստեանի մահը։ Նուէրներ։ Նոր ընկերութիւն։ Շահի ծննդ. տօնը։ Երկր. և պետ կալուածների միութ. յատկացրած գումարը։ Վառօդի պահեստ։ Օժանդակութիւն։ Եղանակը Թիֆլիսում։ Ս.Պետերբուրգից։ Ղուշուց։ Զամզուրայից։ Աֆյոնկարայից։
Թղթակցութիւններ—Նամակ Ամերիկայից.—Նիւ-Եօրկ Վաղարշապատ։
Քաղաքական. Բուլղարիա։ Մակեդոնիա։ Սպանիա։
Հեռագրներ։
Տպաւորութիւններ։
Յայտարարութիւններ։

Կ. ՊՈԼՍԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔԸ.

Հեռագիրը հաղորդեց, որ Մաղաքիա եպիսկոպոս Օրմանեանն ընտրուել է Կ. Պոլսի պատրիարք։ Հայոց Օրմանեանը հայ կաթոլիկ ընտանիքի զաւակ է եղել և հենց մանկութիւնից էլ սիրուել մեծացել է կաթոլիկութեան մէնաստրատի մէջ։ Նա իւր անհատական ընդունակութիւնների և ստացած բարձր կրթութեան շնորհիւ կաթոլիկ եկեղեցու նշանաւոր և գործունեայ վարպետներից մէկին էր, իւր ժամանակի, լաւ որպէս քարոզիչ և լաւ որպէս դաստատու։ Առանձնապէս նա ուսումնասիրել է աստուածաբանական դիտութիւնը, բայց հմուտ է նա և եկեղեցական իրաւագիտութեան և բարոյական փիլիսոփայութեան մէջ։ Հայոց Օրմանեանը 1879 թ. թողել կաթոլիկ եկեղեցու պիրկը և ընդունել հայոց գաւանութիւնը՝ Ներսէս Վարժապետեանի պատրիարքութեան օրով։ Ըրքան մեզ յայտնի է նոյն իսկ իւր հայր Օրմանեանի անմիջական վատահայուցիչ խոսքերից, նա իւր կեանքի այդ խոշոր քայլը արել է նեղրին խորը համոզմունքից դրդուած. նրան գրաւել է եղել «հայոց եկեղեցու առաքելական անարատութիւնն ու պարզութիւնը», հակառակ պապական եկեղեցու աշխարհասիրական ձգտումներին և եկեղեցու անունով գործուող դեղծումներին։ Իսկ այդ քայլն անելու պատահական առիթն եղաւ հասունանների Պոլսում կատարած գաւազարակի գործունէութիւնը։

Հայոց եկեղեցու ծոցը մանելուց յետոյ Օրմանեան վարդապետը նոյն եռանդուն և գործունեայ հոգևորականը մնաց, ինչ որ էր առաջ։ Առանձին աչքի ընկնող քարոզչական շնորհք ունենալով, նա առաւելապէս իւր փիլոնական քարոզներով պատուաւոր տեղ բռնեց Լբբրահայոց հոգևորականների մէջ։ Կարճ ժամանակից յետոյ հայր Օրմանեանին նշանակեցին Կարնոյ առաջնորդ, ուր նա առաջնորդական գործերի հետ միասին Սանասարեան վարժարանում ուսուցչի պաշտօն էր վարում և հոկում գպրոցի վրայ։ 1886 թուին նա ուխտագած էր Լեռնին Կարինը և վերադառնալ Պոլիս. հենց այդ թուականին էլ հանգուցեալ Սրուանձտեանի հետ միասին ուղևորուելով ս.Էջմիածին նորատասատատ Մակար կաթողիկոսի ձեռքով եպիսկոպոսական աստիճան ընդունեց. ահա այս ժամանակ ուսումնասիրը ծանօթացան նրա և հանգուցեալ Սրուանձտեանի քարոզչական ձիրքի հետ, որսվհետև նրանք իրենց այդ ճանապարհորդութեան ընթացքում բարովներ էլին կարդում եկեղեցու բեմից մեծ քաղաքներում։

Կարճ ժամանակից յետոյ Օրմանեան եպիսկոպոսը հանգուց. Մակար կաթողիկոսի կարգադրութեամբ հրաւիրուեց ս. Էջմիածին, որպէս սոսկ ուսուցիչ՝ ձեմարանում աստուածարանութեան դասատուութիւնը ստանձնելու։ Պէտք է ասել որ մի տարւայ ընթացքում, արդիւնաւոր գործունէութիւն ունեցաւ և կարողացաւ ձեմարանի ուսանողներից մի փոքրիկ խումբ պատրաստել, որը յանկանում էր, Գէորգ Դ. կաթողիկոսի տաժած յոյսերի առաջին երախայրիքը լինել կաթոլիկոսական հոգևորականութեան մէջ։

Հանգուցեալ Մակար կաթողիկոսը տեսնելով հայր Օրմանեանի մեծ ընդունակութիւնը և առաջարկած ծրագրները, կամեցաւ նրան ընդունել ս. Էջմիածնի միաբանութեան մէջ. բայց նա մի տարուց յետոյ ստիպուած էր լքանել Էջմիածինը, որով և անկատար մնացին նրա ծրագրները։

Սրանից յետոյ հայր Օրմանեանը նշանակուեց Արմաշի վանքի վանահայր, ուր նա մասամբ իրագործեց Էջմիածնում կազմած իւր ծրագրները, կաստակոն հոգևորականներ պատրաստող գպրոց բանալով և մամուլ ստեղծելով։ Վերջին կաթոլիկոսական ընտրութեանը նա եկել էր ս. Էջմիածին որպէս Կ. Պոլսի պատրիարքի փոխանորդ։

Հայր Օրմանեանը գեռ երիտասարդ է և ինչպէս ասացինք հեռատես հոգևորական է. նա մի առանձին ընդունակութիւն ունի, ուր էլ որ գտնւում է, լաւ իրեն և լաւ շրջապատողների համար գործ ստեղծելու. այդ երևում է նրա վարած պաշտօններից։ Եւրոպական դիտութիւն ունի, լաւ հայագէտ է և լաւ տիրում է մի քանի եւրոպական լեզուների։

Թէ ինչ դերը կրօնի նորընտիր պատրիարքը իւր նոր պատասխանատու պաշտօնի մէջ և ծրքան ընդունակ կրլինի այդ պաշտօնը վարելու, այժմւանից մենք ոչինչ չենք կարող ասել, ի նկատի ունենալով ներկայ խառը դրութիւնը, երբ Պոլսի պատրիարքից սուլթանը իրեն է պահանջում, իսկ ժողովուրդը իրեն։ Մենք ցանկանում ենք նրան յաջող քնարութիւն և արիութիւն։

Գ. Հ.

ՄԱՐԳԻՋ ՕՍԼՍԲՐՈՒ ՃԱՌԸ

(Վերջ [1])

«Լօրդ-մէրը խնդրից ինձ, որ խօսեմ մեր դիւանագիտական գործողութիւնների մասին։ Սակայն, խոստովանել կաթելի է միայն սեպհական, այլ ոչ ուրիշ մեզքերը։ Մեզ խորհուրդ են տալիս (Գաբրնէլ և Մորլէյ) փոխանակ համոզելու ուրիշներին, որ մենք փառահեղ առանձնակի դրութեան մէջ ենք, համոզենք, որ մենք առաքինի ենք, և դրա համար դիմենք փառահեղ ինքնահրաժարման ու ձգենք մեր այժմեան բռնած հողերը։ Այդ պարոնները, չգիտեմ ինչու, երեակայում են, որ եթէ Անգլիան այդպէս վարուի, միւս պետութիւնները էլ, նրա օրինակից զգացուելով, կըհետևին նրան։ Դա միջազգային քաղաքականութեան պայմանների գեղեցիկ, բայց փոքր ինչ իդիլիական հասկացողութիւն է։ Ես համակիր չեմ դրան։ Յամենայն դէպս, պէտք է ասեմ, որ այժմեան խնդիրները, որոնք լուծում են պահանջում սրեկէքում, չեն կարող սահմանել մեզ ձգելու այն քաղաքականութիւնը, որին ցարդ հետևել ենք մենք, կամ թէ թողնել թէկուզ մի թիզ այն հողերից, որը մենք ունինք այժմ»։ (Ծափ)։

Այնուհետև ճառախօսն անցաւ եգիպտական խնդրին։ Նա մանրամասն եղաւ գիներալ Գիչենների դէպի եգիպտոս կատարած վերջին արշաւանքի և այդ արշաւանքի ունեցած բարերարող ելքի վրայ։ Գովաբանելով Գիչենների, նա չմոռացաւ լորդ Կրոմերին, եգիպտոսի դիւանագիտական գործակալին, և խոստացաւ, որ Անգլիան այդպէս կանգնած կըմնայ Եգիպտոսի կողքին, մինչև որ նա կըկարողանայ ինքնուրոյն կանգնել։

Դա, իրաւ, կըլինէր բանագործութիւն, բայց ինչ մեծ ցաւ. դա ժամանակիս քաղաքակրթութեան լոգիկայի այբ ու բենն է և հենց այդ այբ ու բենից է կազմուած Էջչա բառը։

Բացի այդ, ոչ մի գոգութիւն այնպէս անպատիժ չէ մնում, որպէս բանագործութիւնը։

Այս մասին մենք յաճախ կարդում ենք ռուսական թերթերում, բայց աւելի յաճախ—հայ թերթերում։ Եւ դա մի պարզ ապացոյց է, որ այդ ախտը, ինչպէս և նման ախտերը մեզ աւելի ևս վարակել են։

[1]) Տես «Նոր-Դար» № 199

ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

IX

Նկատեցէք, որ մի փոքր ուշացրի արտաւորութիւններս։ Եթէ պատճառն ուզում էք իմանալ, հետևեալն է։ Հետս քաշուած ու ձայնս կտրած հանդիսատես էի մի շատ զուարճալի տեսարանի։

Դու մի ասիլ գտնուել են անհատներ, որոնք իրենց դէմքը նշմարել են տպաւորութիւններիս հայելու մէջ, ու իրար պիտի ցոյց են տալիս նաև աշխարհին։ Ո՛չ, դա եղել է իրենց երկրորդ և իսկական դէմքը։

Փակագծի մէջ մի անեկդոտ պատմեմ, որ շատ բնորոշ է։

Պալահանդէսում մի կին մօտենում է մի պարոնի։

—Ամօթ չէ՞, ասում մի ժամ է այստեղ ենք և դուք չէք մօտենում և չէք բարեւում։

—Ներեցէք, տիկին, ես սովորութիւն չունիմ անծանօթներին մօտենալու, պատասխանում է ջենտելմէնը։

—Վա՜հ, մի՞թէ չէք ճանաչում ձեր ս մենամօտիկ բարեկամին...

—Ամենամօտիկ բարեկա՞մ... քաւ լիցի... ամենևին չեմ յիշում։

Տիկինը համբերութիւնից դուրս գալով, յիշում է իւր ով լինելը։

—Ա՜խ, այո՛,—չեշտում է ջենտելմէնը ձեռքը նրան մեկնելով,—բայց ես մոռացել չեմ, որ չճանաչեցի. ձեր դէմքն այժմ ներկուած է, իսկ հազուստներդ բոլորովին փոխուած...

X

Փակագիծը բանալով պէտք է ասեմ, որ ամենքս էլ երկու դէմքի տէր ենք (եթէ աւելին չասեմ) —անալին և հրապարակային։

Առաջին դէմքը ճանաչում ենք միմիայն մենք, իսկ երկրորդը կամ շատերը—հասարակութիւնը։

Բայց որովհետև տպաւորութիւններս հայելու մէջ ցոլացած են եղել մի քանիսի պահուն կամ իսկական դէմքերը, դրա համար էլ նրանք ամեն ճիգ թափում են իմանալու թէ ով է կրկիսկոսը։

Եւ նրանք դիմում են սրան ու նրան։

—Պ. Առաքելեանց, դուք էք կրկիսկոսը։

—Ո՛չ...

—Ուրեմն անպատճառ դուք էք պ. Գրիգորեանց։

—Ամենևին ոչ...

—Էլ կասկած չկայ, որ դուք էք պ. Մուրադեան։

—Քաւ լիցի...

Իսկ դուք պ. Սիմէոնեանց, դո՞ւք էլ ոչ կասէք։

—«Թող ասացէք»...

—Բաս ո՞վ է է՛, վրդովուած բացականչում են։

Իսկ ես հետս քաշուած ծիծաղում եմ և փառք տալիս, որ իմ օձիքից բռնող չկայ։

XI

Սակայն եթէ մէկն ու մէկը ինձ դիմէը այդպիսի հարցով—«ես ևս» կասէի նոյն իսկ այն դէպքում, երբ ես էլ չինէի։

Առհասարակ կրիտիկոսներից հայհոյ ատտիկ լսում ենք։ Թէ ինչու, այս մասին ձեր կարծիքը չգիտեմ, իսկ իմ կարծիքով նրա համար, որ մենք շատ դէպքերում չենք դիմանում քննադատութեան, այդ պատճառով էլ կրիտիկոսներից սարսափում ենք։

«Նրանք մեզ կըհարուածեն... նրանք մեզ կըջախջախեն... նրանք մեր գեղեցիկ ու պատուաւոր դիմակը կըվերցնեն մեր տղեղ դէմքերից»։

Այսպէս ենք մտածում մենք և սա է մեր վախի պատճառը։

Լոկ մի այդպիսի վախ պատճառելու համար, կրկնում եմ, թէկուզ ես էլ չինէի կրիտիկոսը, «ես ևս» կասէի։

Ես ինձ ասում եմ, որ ինձ ինչ-որ բան է պակասում, որ ես ինչ-որ բանի կարիք ունեմ, որ ինչ-որ բան ինձ պիտի տրուի, որ ես ինչ-որ բանի համար պարտական եմ, որ ես ինչ-որ բան պարտ եմ, որ ես ինչ-որ բան պիտի վճարեմ, որ ես ինչ-որ բան պիտի ընեմ, որ ես ինչ-որ բան պիտի ըլլամ, որ ես ինչ-որ բան պիտի ունենամ, որ ես ինչ-որ բան պիտի ստանամ, որ ես ինչ-որ բան պիտի ստանամ, որ ես ինչ-որ բան պիտի ստան

Նոյնիսկ ֆաշտօգիս մէջ մեզի ուղղուած նամակներ կան, որոնք կը սկսին «Ազգ» բառով։ Ուրեմն ամէն ոք գիտէ, որ մեր թերթը կը կոչուի «Ազգ»

բնավայրերից և ազատ տարածութիւնից՝ հերով չրջապատել նրանց, մինչ ինչպէս մեր ձեռին եղած առանց այն էլ փոքրիկ յարմարութիւնը սչնչացնենք։

Ի վերջոյ նորից պիտի կրկնենք, որ ինչպէս այդտեղ որոշելիս, այնպէս էլ անտեղ տալիս պէտք է աշխատել իրենամութիւնից, բարեկամական կապերից ազատ, լոկ մի անգամ ընդ միշտ որոշուած հատատուն հիմունքներով առաջնորդուել, որոշ սիստեմի հետևել։

Ս. Փ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԲՈՒԼՂԱՐԻԱ

Բուլղարիայի հակակառավարչական կուսակցութիւնը, Ցանկովի, Ռադոսլաովի և Գրեկովի առաջարկութեամբ նորոգական հրամանագիրը է հրատարակել, որով հրաւիրում է իւր կուսակցութեան համախոհներին պատրաստ լինել դեկտ. 27—29 ին լինելիք ընտրութիւնների համար։ Նա առաջարկում է ընտրել իւր կուսակցութեան ներկայացուցիչներին և սահմանել կառավարութեան ներկայացուցիչներին. կառավարութեան միակ նպատակն է, ասում է այդ հրաւէրը, կրճատել սահմանադրական իրաւունքները։

Ասում են, որ Թուրք բուլղարական սահմանագծի հարցը վճռուելու վրայ է. բուլղար և Թուրք սպաներն այդ հարցի վերաբերմամբ արդէն եկել են որոշ համաձայնութեան։

—

ՄԱԿԵԴՈՆԻԱ

Ինչպէս երևում է, Մակեդոնիայում գործերն այնքան էլ լաւ չեն, մանաւանդ Թուրք կառավարութեան համար, որովհետև Թիւրքիան շատ է անհանգստանում և խոստումներից է խօսում։ Այսպէս «Ag. Nat.»-ի հաղորդելով Մակեդոնիայի քաղաքների գայմագամները հաւաքել են իրենց մօտ քրիստոնեայ բնակիչների ներկայացուցիչներին և յայտնել են նրանց, որ սուլթանը խոստանում է մոցնել Մակեդոնիայում ռեֆորմներ, որոնց համար այժմ ծրագիր է կազմում Կ. Պոլսում և մինչև այդ ռեֆորմների մոցնելը խնդրել են հանգիստ կենալ և ուշադրութիւն չդարձնել զրոյց դրդողների վրայ։ Զարմանալին այն է, որ այդ ռեֆորմների խոստումները միշտ արիւնհեղութիւններից յետոյ են լինում։

—

ՍՊԱՆԻԱ

Սպանիայի պատերազմը Ֆիլիպպեան կղզիների դէմ չարունակւում է։ Սպանական տղրիւրներից հաղորդում են, որ սպանիացիների գործը յաջող է գնում. նրանք յաղթութիւն յաղթութեան ետևից են տանում։ Բայց ուրիշ լրագրներ հաղորդում են շատ տխուր լուրեր. ասում են, որ Կուբա կղզում 13,000 հիւանդ և վիրաւորուած կայ, և ընդամենը—50 բժիշկ։ Սպանական լրագրները հաւատից լուր են ստացել, թէ սպանական կառավարութեան գեներալ Վէյլերը գրաւել է ապստամբների բոլոր գլխաւոր վայրերը. մինչդեռ «New Iork Herald»-ի թղթակիցը հաղորդում է, որ գեներալ Վէյլերը մեծ ջարդ է կրել։ Սակայն ընդհանուր կարծիքն այն է, որ ապստամբները չեն կարողանալ երկար դիմանալ և չուտով ստիպուած կլինեն վայր դնել զէնքերը։

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ԼՈՆԴՈՆ, 7 Դեկտեմբերի.—«Times»-ը իր լուր հաղորդում է, որ Լի Հունգ-Չանգը հրաժարական է տալիս, զժգոհ լինելով չինաց կառավարութեան դէպի ինքը ցոյց տուած վարմունքից։

ՕԴԵՍՍԱ, 8 Դեկտեմբերի.—Ի նկատի ունենալով Հնդկաստանի սովը, առևտրական մի քանի տներ բանակցում են հացահատիկ ուղարկելու Հնդկաստան։ Օդեսայի ամբարներում 30,000,000 պուդ հացահատիկ կայ։

ԲԵՐԼԻՆ.—Այսօր պետական կանցլերին այցելեց ռուսաց դեսպան Օստեն-Սակենը, ներկայացնելով նրան ռուսաց պատերազմական-քաղաքական խորհրդակցութիւնների համար։ Առաւօտեան դեսպանը պատուիրակների հետ արտաքին գործերի մինիստրի մօտ էր։

Գնդապետ Լիբերան ուղարկւում է Չինաստան կայսրի կողմից մի առանձին յանձնարարութեամբ։

ՍՈՖԻԱ.—«Միր» լրագիրը վճռապէս հերքում է ռուսական մի քանի թերթերի թղթակիցների տարածած այն լուրը, թէ գահաժառանգը երբէք ներկայ չի լինում յունադաւան ժամասացութեան և թէ նրան սիստեմատիկաբար տանում են կաթոլիկ եկեղեցի։ Ցիշեալ լրագիրը վկայում է, որ իշխ Բորիսը կրթւում է յունադաւան ոգւով։

ԼՈՆԴՈՆ.—Կահիրէից հաղորդում են, որ զինուորական մինիստրը բիւջէից դուրս 40,000 ֆունտ ստերլինգ է պահանջում պահպանելու համար զինուորական այժերն իրենց ներկայ կազմութեամբ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԴ, 9 Դեկտեմբերի.—Սենատը Պալեմի պաշտպան երդ. հաւ. Կարաբչևսկու վճռաբեկ բողոքն անհետևանք թողեց։

ԼՈՆԴՈՆ.—Դր. Ջեմսոնը, որը բանկի մէջ անզամահատութեան ենթարկուեց, մեծ թուլութիւն է զգում։

ԿԱՀԻՐԷ.—Հին Գոնգոլի տեղ շուտափոյթ չինուած և ամրացւում է նոր քաղաք։

ՊԵՏԵՐԲՈՒՐԴ.—Յ. Կ. Այվազովսկին Կայսերական դրան մինիստրին ուղարկել է մի իւղանկար նկար—«Կայսր Ալէքսանդր III ի արձանը Թէոդոսիայում» Թագաւոր Կայսրին մատուցելու համար։ Ինչպէս յայտնի է, Կայսր Ալէքսանդր III ի արձանը Թէոդոսիայում կբացուի նոյեմբերի 14-ին։

ԲԵԼԳՐԱԴ.—Թագաւորը մեկնեց Վենա, իւր բացակայութեան ժամանակ խնամակալութիւնը յանձնելով մինիստրների խորհրդին։

ՓԱՐԻԶ.—Պատգամաւորների ժողովը քննադատում է արտաքին գործերի բիւջէն։ Միլերանը (արմատական) հարցնում է Հանոտոյին, թէ Ֆրանսիայի և Ռուսիայի միջև արդեօք կայ առանձին պայմանագրութիւն։ Միլերանը ուզում է իմանալ այդ համաձայնութեան պայմանները։ Պարլամենտի իրաւունք ունի գլխաւոր կէտերի վերաբերմամբ իմանալու, թէ նրա մէջ ինչպիսի պարտաւորութիւններ են դրուած Ֆրանսիայի վրայ և այն օգուտները, որ նա ստացել է։ Հանոտօն պատասխանում է, «Արդէն մի քանի տարի է, որ գտնւան մինիստրները դէպի Ռուսիան մեր ունեցած յարաբերութիւնների նկատմամբ հաւատարիմ են մնացել այն քաղաքականութեանը, որը ոչ թէ միայն թելադրուած է պետական գործիչների խոհեմութիւնից, այլ և որի հետ միացել է և ժողովրդի զգացումն ինքնաբերաբար։ Անցեալները, Եւրոպայի գլխաւոր պետերին այցելելիս Թագաւորական պատանի Հոյգը եկաւ Ֆրանսիա ողջունելու բարեկամ ազգի կառավարութեանը։ Ֆրանսիան իւր Օգոստափառ Հիւրերի վերաբերմամբ այնպիսի մի արտագին և միևնոյն ժամանակ լի արժանապատուութեամբ ընդունելութիւն ցոյց տուեց, որ ամբողջ աշխարհը զգաց, որ մեծ Թագաւորի և մեծ ազգի իրար հանդիպման մէջ, նախագահից և ժողովրդի ընտրեալներից սկսած մինչև վերջին քաղաքացին, ամենքն անպայման աջակցում էին այդ հանդէսների չքեղութեանը. ուրախութեան և վստահութեան միևնոյն զգայման մէջ միացան ամենքը, ում համար թանկ է անցեալը և սրտին մօտ է ապագան։ Այսօր մեզ հարցուփորձ են, ենթարկում թէ ինչ քաղաքականութեան ենք մենք հետևում։ Մեր նախորդներից այդ բացատրութիւնները չէին պահանջում։ Ես կարող եմ պատասխանել միայն մի բառով. ամեն բան, ինչ որ կարելի է և պէտք էր հրապարակով յայտնել։ Պարզ, ճիշտ և որոշ խօսքերով ասել են ռուսաց Կայսրը և հասարակապետութեան նախագահը Պետերբուրգում զօրքի և նաւատորմղի սպաների առաջ, Պարիզում կառավարութեան և ժողովրդի ներկայացուցիչների առաջ, Շալոնում—զօրքի հրամանատարների և սպաների առաջ։ Արտաքին գործերի մինիստրը մասնաւորիչ է լինում այդ յայտարարութիւնների վրայ։ Իւր պարտքը և բարձրագոյն շահերը, որոնք հասկանալի են ժողովին, ոսկեզօծում են իրեն «ոչինչ չաւելացնել այն համաձայնութեան խնդրի վերաբերմամբ, որը ոչնչ չի մտածում այժմ մերժել կամ կասկածի ենթարկել»։ (Ծ ա ֆ.)։

Պատասխանատու խմբագրի՝
ՄԻՆԱՍ ԲԵՐԲԵՐԵԱՆ

Հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱ ԱՐՏԻԹԻՆՆԵՐ

Открыта подписка на 1897 г.
на еженедѣльный иллюстрированный журналъ
ВОКРУГЪ СВѢТА
50 еженедѣльныхъ иллюстрированныхъ №№ въ годъ, болѣе 2000 столбцовъ текста и до 400 рисунковъ.
КРОМѢ ТОГО БЕЗПЛАТНО
СОБРАНІЕ СОЧИНЕНІЙ
ЖЮЛЯ ВЕРНА
12 ТОМОВЪ!
ЛУЧШИХЪ РОМАНОВЪ:
80,000 верстъ подъ водою. Дѣти капит. Гранта.—Таинствен. островъ.—Воздушн. корабль.—Зеленый лучъ.—Вокругъ свѣта въ 80 дней.—Вверхъ дномъ.—Путеш. къ центру земли.
2 РОСКОШНЫЯ ПРЕМІИ:
Южный берегъ Крыма и Видъ Днѣпра у Кіева.
Оригинальныя въ 40 красокъ. Худ. Кондратенко.
ПОДПИСНАЯ ЦѢНА НА ГОДЪ: безъ картинъ 4 Р. съ двумя картинами 5 Р.
съ доставкою и пересылкою.
Адресъ редакціи: Москва, Валовая ул., д. Т-ва И. Д. Сытина.
(М.) 5—1

„ԲԱՐԻ՞ ԳԻՇԵՐ“
Բացառիկ յատկութիւն ունեցող փոշի միջատների դէմ։
ՄՈՍԿՈՒԱՑԻ Ֆ. ԿՆՕԼԵՐ և ԸՆԿ.
ԴՈՐԾԱՐԱՆԻ
ամենան մանրազնիւթիւն։
ԱՄԵՆ ՏԵՂ Է ԱՅԴԻՆ ԱՇԽԱՏՈՒՈՂ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ՄՕՏ։
(М.) 15—12

Новое Французское Печеніе
С. СІУ и К°
PETIT BEURRE
МОСКВА
С. СІУ и К°
ԸՆՈՐՀԻՒ
Թէյի համար մեր պատրաստած ֆրանսիական պաքսիմատների բարձր յատկութեան
ՄԵՆՔ ՐԱԾԱՆԱՑԱԾ ԵՆՔ
այն բանին, որ ուրիշները մեր պաքսիմատները
ՀՃՇՏԻՒ
ԸՆԴՕՐԻՆԱԿՈՒՄ ԵՆ
ԽՈՒՄԱՓՆՋՔ
ԱՑԴ ԸՆԴՕՐԻՆԱԿՈՒՄՆԵՐԻՑ
ո-շադրութիւն դարձնելով մեր ճեբրհայէն
С. СІУ и К°
(М.) 14—1

1877 г. 1886 г. 1896 г. 1882 г.
ОТЪ ГЛАВНОЙ КОНТОРЫ ВИНО-ТОРГОВЛИ
ПОСТАВЩИКЪ
Двора Его ИМПЕРАТОРСКАГО Величества
ТОВАРИЩЕСТВА
ПЕТРА АРСЕНЬЕВИЧА СМИРНОВА,
У ЧУГУННАГО МОСТА, ВЪ МОСКВѢ.
за высокое достоинство столоваго очищеннаго вина, нѣжинской рябины, водокъ, наливокъ и ликеръ фирма удостоена на Всероссійской Промышленной и Художественной выставкѣ въ Нижнемъ Новгородѣ 1896 г., четвертаго
ГОСУДАРСТВЕННАГО ГЕРБА.
Можно получать во всѣхъ вино-торговляхъ, ресторанахъ и гостинницахъ:
СТОЛОВОЕ ВИНО подъ № 10, № 32, № 20, № 31, и № 21. ПШЕНИЧНОЕ ВИНО № 20, НѢЖИНСКУЮ РЯБИНУ № 30, № 23, ЯГОДНЫЯ НАСТОЙКИ, НАЛИВКИ ЛИКЕРЪ, ГОРЬКІЯ ТРАВНЫЯ и ФРУКТОВЫЯ ВОДКИ, КАВКАЗСКІЙ, ВИНОГРАДНЫЙ КОНЬЯКЪ, РУССКІЯ и ИНОСТРАННЫЯ ВИНОГРАДНЫЯ ВИНА.
Прейсъ-Куранты высылаются немедленно
ОТДѢЛЕНІЯ НАХОДЯТСЯ: въ С.-Петербургѣ, на углу Мал. Морск. и Горохов. д. № 13—8, и въ Нижнемъ-Новгородѣ, на Нижнемъ Базарѣ, противъ Волжско-Камскаго Банка.
М.) 10—6.

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ գրասենեակում և գրավաճառանոցներում վաճառւում են ընկերութեան հետևեալ հրատարակութիւնները։

82	Ձիլիոնի կալանաւորը, Մ. Հարամանի, Ի. Կ. Դիւրեապարեան	— 60
83	Համլէտ Ձէքսպիրի, Թ. անգ. Յով. խան Մաւէհեանի	— 75½
84—87	Քննական պատմ. Հայոց, Ա. Մ. Թարգմանչեանի չորս հատ	4 —
88	Պատմ. Հայոց, բ. տպ. Մ. Պալասանեանի	1 50
89	Ակնոյ հնութիւնք, Յ. ձանիկեանի	2 —
90	Ուրբինօեցի մանուկը, Ույդի զրոյցներից	— 10
91	Գօշկակոր երաժիշտ, Ցիւրնվի	— 5
92	Խնձորենիների երկրում, Ույդի զրոյցներից,	— 10
93	Երկու եղբայր, հեղ. սիկ. Մօնգօմերի թարգմ. Պ. Պ.	— 60
94	Մեծապ. Մուրաց., բ. տպ. Յ. Պարոնեանի.	— 40
95	Նախագիտելիք բուսաբանութ. Ա. Քիշմիշեանի	— 80
96	Հազարից մէկը, Ն. Մամիկոնեանի.	— 60
97	Ինչպէս կուզէք, Ձէքսպիրի. Թ. Յ. խան Մաւէհեանի	— 50
98	Դպրոցական առողջապահ. բժ. Վ. Արծրունի	— 50
99	Կեղեքիչ. վէպ Վ. Ի. Նեմիրովիչ—Դանչենկոյի	— 10
100	Գոռոզ արմաւենի,	— 5
101	Գոռոզ Ագգէն,	— 5
102	ձանապարհորդ կորաը,	— 3
	(Վ. Դարչինի, Թարգմ. Հ. Ա-ռաքելեան.	
103	Մանկական լօտօ, պատկերներով	1 20
104	Գետնափորի երեխան. Թ. Չիրվանզադէ	— 15
105	Վրէժ, Դիւի դը-Մօպասանի, Թ. Լ. Մ. Ադամեանի.	— 5
106	Աիամայ մարդասպան, Թարգմ, Տ. Յովհաննիսեանի	— 15
107	Մուֆլու. Ույդի, Թարգմ. Յ. Օհանեանի.	— 10
108	Աներևոյթ հոդագործ.	— 7
109	Նապաստակ, Սլիվիցկու Թարգմ. օր. Ն. Ղուլիջանեան	— 7
110	Թերունի Մարկօն, Իւրիյ Ճակչիչի, Թարգ. Մեգնիկեանի	— 10
111	Ռոմէօ և Ջուլիէտ, Ձէքսպիրի, Թ. անգ. Յ. խան Մաւէհեանի	— 60

(448) 16—15

Тифлисъ Доз. цензурою 11-го Ноября 1896 г. Տպարան Ա. Մելիք-Շահնազարեանց։ Типогр. А. О. Меликъ-Шахназаріанца, Воронц. Набережн. церковный домъ